Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, Դեկտեմբեր 26-ին. Թիֆլիս. № 52

## ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻ ԿՈԹՈՂՆԵՐ




ՆԻՒԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Худож.-Лит. С. Быхова, Тифлисъ.

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1910 թ.

5 ՏԱՐԻ

# ԽԱԹԱԲԱԼԱ

5 ՏԱՐԻ

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԷՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրփիչ և գլփիչ, անկեղծ և կեղծաւոր, գործիչ — խայտառակիչների։

Անհրաժեշտ թերթ բոլոր բնակիչների համար

«ԽԱԹԱԲԱԼԱՆ» շատերին ծիծաղեցնում է, շատերին էլ ցաւեցնում, բայց ոչ որի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի։ Խմբագրին կարելի է տեսնել, երբ քէֆերդ ուզի։

Հասցէն Тифлисъ. Сергѣевская № 1 Редакція „Хатабала".

Արտասահմանից Tiflis Gaucas Redaction «Khatabala»

Խմբագիր-հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ»
ԲԱԺՆԵԳԻՆՆ Է

| | |
|---|---|
| Տարեկան ........ | 5 ր. |
| Կէս տարին ....... | 3 » |
| Երեք ամիսը ...... | 1 » 50 կ. |
| Ամիսը ......... | — 50 » |
| Թիֆլիզում տարեկան . | 4 » — » |

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ի բաժանորդները կարող են ստանալ «ՍՈՒՐՀԱՆԴԱԿ» օրաթերթը պակաս վճարով, երկուսին միասին փոխանակ.

| | |
|---|---|
| Տարեկան 12 ր.՝ վճարում են | 10 ր. |
| Կէս տարին ........ | 6 ր. |
| Երեք ամիսը ...... | 3 ր. 50 կ. |
| Մէկ ամիսը ...... | 1 ր. 20 կ. |

100 տարով բաժանորդագրուել ցանկացողին 75% զեղչ

Զրի կարդացողներին պէտք է նկարենք գլխիվայր։

## ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Վերջացնելով տարին, ու տալով մեր այս տարուայ բաժանորդներին 52 № «Խաթաբալա»-ներ, մենք, յունուարի 1-ից կուղարկենք սակայն միմիայն մեր այն բաժանորդներին, որոնք վերանորոգել են բաժանորդագրութիւնը։

Յունուարի 1-ի համարից մենք կը պահենք որոշ թիւ, որպէսզի ապագա-յում գրուողներին համարների լրիւ թիւը հասցնենք։

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԿԵԱՆՔԻ ԵՒ «ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ՀԱՄԱՐ

Խաթաբալեաններ բոլոր երկիրների միացէք եւ թէ խելք ունիք մեր թերթերին բաժանորդ գրուեցէք։

Մենք ձեզ համար ենք ասում, ձեր շահն ու օգուտը ի նկատի առնում. թէ չէ՝ ուրիշները նոյն իսկ աղաչում, պաղատում են.

Ուրեմն, բաժանորդագրուեցէք!
Թերթերը տարածեցէք!
Կուսակցութիւնը սատարացրէք!
Ազգը կորստից փրկեցէք!!!

Որովհետեւ պաստային փոխադրական բլանկներից դեռ էլի շատ ունենք, ուստի այս անգամ էլ ուղարկում ենք մեր բոլոր հաւատարիմ ընթերցողներին եւ ջանասէր բաժանորդներին այդ բլանկներից երկուական օրինակ եւ սրանով առաջարկում ենք, այս անգամ տարածեցէք այդ բլանկները ձեր թշնամիների մէջ, յորդորելով եւ ստիպելով, անպատճառ բաժանորդագրուել, որովհետեւ մեր ընթերցողների եւ բաժանորդների թշնամիները ենթէ կարդան մեր «Խաթաբալան», հաստատ խօսք ենք տալիս, թշնամութիւնից ձեռք կը վերցնեն եւ իրար բարեկամներ կը դառնան։

Փորձեցէք պարոններ եւ համոզուեցէք մեր ասածների մէջ։

## ՎԻՐՋԱԹՈՒՂ

Էս մէկը, էն մէկէլ՝ էրկուսը, իժում էլ էկաւ իրիքը, սրամէն էղնէն էս էլ չուրսը, չուրս՛ը—սրամէն էլ խօ ձեռն ինք քաշում, սրան էլ ինք ախտում՝ գիւլը գլորում ուխդենական անդունդը ու դարախանի խեր։

Մէկէլ շաբաթ վրա հինգ տարումը կուլինք, ու թէ վուր չը մեռանք, վրայ վիցը կու անց կենանք, թէ վիցն էլ անց կացրինք, վրայ օխտումը կու մանինք. օխտի գլուխն էլ վուր կերանք՝ էնէ ութումը կու մանինք, ութն էլ թէ գլորեցինք, ինը խօ հիշտ կու մանինք. իննին էլ վուր քամու տանք, ու տաս տարում մանինք, մինք էլ ու դուք էլ,—էն շախը՝ վունց իս, վունց միր պարոնի չլէննիրը ու «Խաթաբալա» կարթացողները, էլ չինք մեռնի, խակի ծէրօյի մունաթ էլ չինք ուզի, վուր ուրիշներու հանգը խմինք. էնչախուան էղնէն կինըը միզ, ամա, վունց վուր հարանիք։

Մաշ։

Էս դիփ էնդուր իմ ասում, վուր համ դուք «Խաթաբալին» բաժնուրթ գրուիք, համ ուրիշներին էլ միր հաւ-աի դարցնիք ու համ էլ պարոնի հա-մա, դուք էլ փիքր անիք։

Ղուրթ ու ղուրթ, մէնակ իս ինչ է, ձիր մամի նոքարը խօ չիմ, վուր փիքր անիմ։

Փիէ, հէր օխնածնիր, վուր ուզիք սատանին կանաք քրիստոնայ չինիք ու ձիր բարեգմերուն, ան դուշմաններուն խաթաբալխանիր չիք կանայ չինի։

Մէ տեհէք է, թէ ինչ թաւուր վիգրիշնի րիլէթնիր ինք բաժնում տաս տարուայ միր բաժնուրթներուն.—ուխդենական կինք ինք տալի, իրա սակութար չիխտի-պիտօներով, իրան սակութար պրաւա-մրաւէքով։

Էլ ինչ իք ուզում տօ լօթիք, սրամէն էլ լաւ բան. ուխտենական կինք, էրկու-էրկու դուժին կնիկ, անպակաս կերուխում ու դհօլ-դուդուկով քէփ ու էն էլ՝ Օրթաճալում։

Մարթուն պիտի մէ բան մէ ջէր ասին. ախլուուրին խակի մէ ջէր էլ հարկաւուր չէ, հաստագլխին օրեկան հարսանութ հարիր ջէր էլ վուր ասիս, էլի գոգրումը բան չի մանի։

Այ Սիրեկան Տիրդանովին քանի ջէր ասում իմ, ախպէր, ձիռը վիկալ էշմիաձնից. թէ քու մամի գջլած հոքին կու սիրիս, յիդ քաշի Սինօթիցն էլ, Վէհարնիցն էլ ու Ճեմարանիցն էլ, սա կի էտ բանը չի լսում.. էտի էրեւում է, վուր Սիրեկանը դուրթ է լաւ տղա է, համա խիստ գօգրագլուխ է, գլխումը բան չէ մանում։

Այ հիմի վիկալնինք Կոստա Խատիսովին, ինչ կօսիք ախպէր, մարթը չնուրքով տղայ է, ղուրթ է, մէ մինձ

ეროვნული ბიბლიოთეკა

բան չէ, մազրամ էն վէզը, վէզը վուր չըլի, խօ՝ էլի մէ բան ա՛ժէ։

Գուզիք, վիկալնինք շուշկցիններուն, հիմի կօխքթէ՝ զարթարադցիք են, դրանց վրեն ինչի՞ ենք խօսում. էս խօ վունչինչ չիմ սաճւմ, մենակ էն գուզիմ ասի,—շուշկցիններու հանգը տաղանդաւուր ու անբարիշ էլի տեհնիֆք, արա դրանք վուր մեր Աշոտ արփազանի զադրը չիմացան, բաս դրանք քանի գրօշի խիլք ունին։

Վիկալնինք հիմի էրեւնցանց, ինչի, սրանք կի պակաս թանխէք ուռղնիր են. էպիսկոպոսներու համա կուրօէքը սրանք չին շինում. բա էլ ինչ. էստուրմէն էլ լաւ լուութին, համա վուր չիք խմանում վունց մէկի զադրը, վունց մէկի մազրը ու դուս իք տալի, թէ էրեւանցիքը, կօսէ, անպէտք խալխ են, չունքի դրախտում ապրելով, վունչինչ չին շինում, ու սուսայ սրամէն, գժուխք ուփրօ են սիրում, քանց թէ գուրձ։

Վիկալնինք, ախպէր մեր քաղկցոց, ուժերցն ինք պակաս, ինչ պակաս քէլեխ ուտողներ ինք, արա ով գուզէ մեռնի, վուր թիփլիզցին քէլեխ չի ուտի. էս պակաս սակաւէրութին է, էս պակաս ցօցխալութին, էս պակաս մարթավարութին ու մարիփաթ է՛։

Ինչ է սաում Եզօպոս մարքարէն, մեր բախկի վրէն. ա՛յ

> «Ու քաղաք սիրուն ու ՝ջէյրաններով լեքը կայ ու գոյ, կօսէ, էրկու ափանց գեժ Քուր գետի վրայ, վուրդի կօսէ, ունապ ու թութ վաղ հասնի և տղայքըն գինեատիկ ու աղջկերք գինեատիկէք վունչից աշխատին, մազրամ Գալաւինցկին չափչփին, զարտխատս ու ուհիս սիրեցին և քինթ ու պռունկ ջարթեցին, կօսէ։
> Հայք Թիֆլիզի, կօսէ, Աստուծ գիտէ հայք են թէ վա՛յք, զի մէթօնիացեալ, ոչ խօսին զհայէվար լեզուն, կօսէ, ոչ փիքըր անին վասն ազգի և ոչ էլ զհասարին, կօսէ. վասն իրենց, չունքի, կօսէ, կենթանիներու հանգի, ան համեճներու թաւուր, կամբօստապօլիտ են, ու ախմախներու թաւուր, որ ոչ գիգին զադրը և զմարդը, ազգին Թարգմանյ», կօսէ։

Էս բանիրը ինչի համա է ասի, վուր մինք էլ մարթ դառնանք, բաս չէ ու ձիր գլխի արեր գիդենայ, գիփ էն է փիքըր արի թէ, վո՞ւնց լօքօ ուտի ու կախէթու գինին կմկմացնելով տուտուց-տուտուց դուս տայ, վունց վուր դուս են տալի մեր զազէթնիրը, բեզպրազօն ու անհեսաբ։

Թէ Աստուծ կու սիրիք, ինչ վուր սաում իմ, անգիր սովրեցէք, հէր օխնածնիր ինչ էլաւ ձիզ, գիփ ուրփաթ օրւայ զազինայի համա վուր չը փիքըր անիք, մէ մէ ջէր էլ ազկի ու զօզրի և մանաւանդ «Խաթարալի» համա փիքըր արէք, թէ չէ դուք գիդիք, կանաք ան-«Խաթարալա» մնայ. չէ, չիք կանայ, ինչի վուր ան-«Խաթարալա» վունց հասուց ազկը կու մնայ ու վունց՝ «Խաթարալէն» առանց ազկի։

Տարին վիրչանում է, ու մինք միրը առեցինք, դուք էլ իմացաք. հանաքը հանաք, չանաքն էլ՝ չանաք, էստուր էդնէն մէ բան էլ գուզիմ վուր ըլի։ Թազա տարութին մեր «Խաթարալից» սաւսայ, վունց մէ խաթարալա չը մըտնի ձիր տունը, ձիր օջախը, ձիր գուրձի մէչ ու ձիր կինքում։

Աստուծ սաղ պահէ ձիզ էլ, միզ էլ, հասուց ազկին էլ ու ամենազօրեղ «Խաթարալին» էլ։

Ամէն։

Գասպար Կալատուզեան

---

## ԱՆԳՐԱԳԷՏ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ ՄՏՔԵՐԻՑ

—Եթէ ուզում ես վառ մարդ չդառնալ՝ փոխանակ փողը պարտք տալու, նուէր տուր։

—

—Լաւութիւնը իրաւունք չունի հատուցում պահանջելու, բայց իրաւունք ունի պահանջելու, որ փոխարէնը վատութիւն չանեն։

—

—Ջրասայլին առանց թրջվելու օգնութիւն չի հասցնիլ։

—

—Լաւ է հասկացող, քան կարդացող։

—

—Լաւ է մարդ սեղանին անօթ չունենայ քան ամօթ երեսին։

Մանսի

---

## ԱՇԽԱՐՔԸ ՎԵՐՋԱՆՈՒՄ Ա

Երևան 16-ն դեկտ.

Էնա, հօ իմացաք, որ մեր Գասպար Կալատուզովը Մակար Զմշկովի սմաւարի տուռբովը տեսել ա, որ Հալլէ աստղը գալիս ա ու էնպէս գիպչելու ա մեր աշխարքի քեալլովը, որ ձմերուկի դայգա կտորտանքը դէս ու դէն ա ցրիւ ընկնելու։

Ասենք մեր Երևանու կնանիքը վաղուց էին էրազ տեսել, որ աշխարքը կործանելու ա. ամմա ես չէի հաւատում, ինչի՞ որ դրանք էրազներում համ շատ օյինբազ բաներ են տեսնում, համ էլ խօսում են առանց պադգօրնի տրուբի։ Ամմա—պայց Մակար Զմշկովի տրուբի նաղլը ուրիշ բան ա։

Ղօրթ ա, ամենքիս տանն էլ կայ էս սմաւարի տրուբէքիցը, ամմա—պայց ինչդդար մէջովը մտիկ եմ տալի, սկի զադ չի էրեւում աչկիս. ըստբանից ես մտածում եմ, որ եա մեր էս տրուբէքըն ա ֆալշիւի, եա թէ չէ Մակար Զմշկովի աչկերը, որ էդ տեսակ պէս պէս բաներ ա ընւում իրանց։

Հար-նայխաս, հարխաս. հիմի նազդումը էս աշխարը մօշլայ ա ըլնում, հոլբաթ «կարքատըրթուքը ըտենց ա» ով կարա դակօնին հակառակւի. հիմի բանն էս ա, որ էդ խաբարից յետը մեր Երեւանում ինչդդար մարդիկ կան, միանքամից սամսեմ փոխւել են.—այ Աթամ Ենգիբարովը, Խանփարանց Սիմօնը, Երւանդ աղէն, Համփարցում աղէն Խօրասանովը. Արզումանովը, Դիլբարանջին և այլն, ու սկսել են մի գլուխ իրանց փողերը ցրիւ տալ, որը աղքատներին, որը շկօլներին, որը գիրք ու կաղէթաշիներին, որը քէփի։ Աթամ Ենգիբարովը իրեք փայտօն էր զակազ արել. մինը իրան շլապկէն էր գրել, մինը կալօշները, մէկումն էլ ինքը ու քէֆ էր անում։ Այ ինչ եմ ասել. հիմի հասկանում եմ, որ մահը մարդկանց խելօքացնում ա։ Մակար Զմշկովը վաղուց պէտք ա իրան տրուբէն դուս բերէր մէջտան։ Խալախս մենակ լաւ կլնէր, որ էս տներն ու դուքանների քրէհներն էլ էժանացնէյին մի քիչ։

Ամմա, Գասպար ջան, խօսքը մէջներիս մնայ, տրաֆցըս արին ա գնում։ Ախր եանի ո՞նց պէտք ա վերջանայ, բաս մեր Գեօղակենց ձորը, ձեր Մուշտէյիդը, մեր Սուզիքեարը. ձեր Օրթաճալէն, մեր Փակարազարը։ ձեր Գալաւինովկին. բաս հէնց պէտք ա փչանան. բաս ուրեմն էլ զալմու զինի չպտենք խմի՞, ջէջի արաղը, Եփրեմի սրխտօրով քեալլափաչէն։

Ախ ինչ ասեմ քու տրուբին, ա՛յ Զմշկով, թէ մի ձեռ կնկնի։ Եանի ախր սամսեմ պէտք ա կործանւի՞, ախըր ասա՛ է՛, բա էս բաները միտս ընկնելիս ո՞նց լաց չլնեմ, բա դու լաց չէս ըլնում, ա Գասպար, ուրեմն հենց սուս ու փուս գլուխներս պէտք ա վէ դնենք ու էթանք. բա մեր էրեւանը, էն շաքարի պէս դութմէն. շալախը, կանանչին, բողկը, ախար, ախար, ո՞նց լաց չլնեմ, այ անխապիներ։

Ախ, հեղճ հարուստներ, ձեր դարդը ըսկի քաշելու չի ըլնում. ախր ես ո՞նց չմտածեմ ձեզ համար, ախ ես ձեր հօքուն մատաղ, Աստուած վկայ, շատ եմ ցաւում, շատ ձեզ համար, լափ հենց եմ լաց ըլնում, որ արտասուք ա գալի։

Էհ ինչ արած, հիմի որ ըտենց ա, գիդամ որ ձեր փողերի համար մաթալ էք մնացել, շատ էք մտածում. բա որ ըսօրան օրը ես ձեզ պէտք չգամ, էլ ե՞ր օրւայ համար եմ։ Էդ զումարներից մի այլըմ խար-

О.И.ШЛИНГ



Հ. Առաքելեան և Ռ. Խանազատը «Մշակի» հին արխիւներից նիւթեր են հաւաքում «Արօրի» համար։

## ՄԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ



—Ասացէք խնդրեմ, դուք սիրում էք Ձեր հայրենիքը։

—Սիրում եմ, երբ փող են ուղարկում, իսկ իմ հայրենիքը գարեջուրն է և մայրենիքն էլ՝ դու դու, իմ Վեներա։

ջէք բէֆ արէք, մի այգըմ աղքատ ուզբատի, ուսումնարանի, թուղթ ու կաղէթի ունեցէք, մնացողներն էլ բերէք ինձ պահ ունէք, հենց պահեմ, որ բոլի սատանէքն էլ չտեսնեն։ Վախիլ մէք, սատացական էլ կը տամ և խօսք կտամ, որ սաղ սալամաթ կը բերեմ ու էն գունիումը ձեզ կը յանցնեմ։

Դէ փողերը ղրկէք գայ։

Փալանդուզ Մ'կօ

---

## ՙՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ

Մեզնում ամենքն էլ կարթ խաղացող են,
Հարուստ թէ աղքատ, թէ փոքր թէ մեծ.
Վարժապետ, ուստա, տէրտէր, ռանչպար
Այնքան խաղացին, դառան կարթածեծ։

Հիմք դրեց սրան մի լաւ ուսուցիչ,
Որ դաս տալուց լաւ, թուղթ սարքել գիտէր՝
Ու պլոկում էր դէմինին անխիղճ
Բոլորի փողը սեփականում էր։

Այդ որ նկատեց մի ուստա խաղցող,
Ոչ թէ վարժապետ, այլ մի ծառայող.
Վրան յարձակւեց դաշոյնը քաշած.
Խեկոյն յետ առաւ փողերը տարւած։

Բայց գեո սրանով չըաւարտւեց,
Մահ է խոստանում վզիցը բռնած.
Միւսները շուտ վրայ են հասնում,
Թշւառ ուսուցչին հազիւ ազատում։

Մի քանի շաբաթ խաղը դադարեց,
Բայց երբ նա մի նոր պաշտօնի կանչւեց,
Ցատուկ ժողովի անզը պատրաստեց,
Խաղի սեզօնը դարձեալ սկսեց։

Թէ սրա վերջը ինչ պէտք է լինի,
Այժմս գուշակել ոչ ոք կարող չի.
Ես «Խաթաբալի» լուսանկարչի,
Պաշտօն կը խնդրեմ և տանց վարձի՝

Որ ժամանակին մի լաւ նկարեմ
Մեր հերոսների ունքն ու պատկերը.
Ցուցահանդէսին նւէր ուղարկեմ
Պատկերքը հանած՝ գլխից կրունկը։

Նկարիչ

---

## ՀԵՔԻԱԹ ՄԵԾԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեզնից շատ առաջ կար մի հարուստ մեծատուն, որի տունը լի էր ոսկի արծաթով։ Բայց ինքը ամուրի էր, մի զաւակ չունէր, որ մահից յետոյ իր հարստութիւնը նրան կտակէր։ Ուստի մտածեց։

«Լաւ է պատկւեմ. անժառանգ մեռամ, այս իմ փողերը ում պիտի մնայ»։

---

## ՀԱՒԱՏՔ

Հետեւեալ օրը մի աղջիկ ուզեց ու մեծ ու շքեղ խնջոյք նա սարքեց և տօռ-փառօք պսակի գնաց։ Դեռ եկեղեցու շէմքին չը հասած, Գաբրէլ հրեշտակը նրան երեւաց։

—Տուր հոգիդ,—ասեց, ժամդ է լրացած, դու չես լինելու երբէք պսակւած։

Ցանկարծ այս ժամին, որտեղից որ էր, անխելք ու աղքատ մի զառամեալ ծեր գողգոջուն ձայնով դէպ նրանց գնաց.—Այ, առ իմ հոգին նրա փոխարէն, ասեց ծերուկը Գաբրէլ հրեշտակին։

Գաբրէլ հրեշտակը, երբ լաւ մտածեց, տեսաւ որ մէկ է, հոգին հոգի է… ու համաձայնւեց, աղքատից առաւ՝ հարստին արձակեց, հարստին տւաւ Աստծուն տարաւ։

Հարուստը ապրեց, ժառանգ էլ եղաւ, բայց հոգով խելքով չափազանց աղքատ։ Այս է պատճառը շատ հարուստների, հոգով ու խելքով աղքատ լինելուն։

Մոն-Սի

---

## ԻՄ ԴԵՂԸ

—Ասա՛ որդիս, ինչղ է ցաւում,
Ասա անեմ ցաւիդ ճար…
Էդ ինչ ցաւ է, ինչ անուն տամ
Դու դառել ես խելագար…

«Ի՞նչս է ցաւում… ես էլ չգիտեմ,
Բայց մ՛ն, մայրիկ, շատ խորն է…
Նըրա դեղը ես լաւ գիտեմ
Դա իմ կոյսիս ժպիտն է…

Դէմօն

---

## ՖԵԼԻԷՏՕ՛Ն



### ՍԻՐՈՂ ՍՐՏԵՐ

(Փինալ)

Մեր Դօն-Ժուան Կարօ Թզուկեանը, արխուր ու տրտում տուն վերադարձաւ։

Նա չը գիտէր թէ ինչ անէր, ձեռները գրպանում պատէպատ էր ընկնում… դուրս անել և այն էլ «յայտնի» բանաստեղծ Կարօին, դա անկարելի է։

Եւ այդ պատճառով Կարօն կամեցաւ իր գլխի անցքը պօէմա դարձնել և նւիրել օր. Վարինային։

Ամենադժւարը Կարօի համար համապատասխան վերնագիր գտնելն էր։

Երկար ու ձիգ մտածելուց յետոյ, որոշեց պօէմը անւանել «Ախ-Մարօ» նմանեցնելով Յովհաննէս Թումանեանի «Ախթամարին»։

Ի՞նչ կայ որ, «Թամար» դարձաւ «Մարօ».

Հարկաւոր էր կազմել առաջաբան… և ահա մեր Կարօն նստում է, գրում է, վեր է կենում, նորից նստում է, նորից գրում է, քրտնում է, կարդում է, մտածում է, նորից գրում է և վերջը մի այսպիսի բան է դուրս բերում։

### Ա Խ Մ Ա Ր Օ

(Պօէմա 12 երգով

Նւէր համեստափայլ օր. Վարինային

Անհուն եթերում, վառանդի ծոցում
Գոյութեան կուսի լոյն ապարիզում,
Մի երիտասարդ յոգնած, ուժասպառ
Երգեր է երգում սրտից վշտահար…
Եւ այն երգերի լալկան ձայները,
Եւ բանաստեղծի գունատ աչերը,
Կանչում են, կանչում նրա սիրուհուն,
Եւ որոնում են այն գեղեցկուհուն,
Որ բանաստեղծի վէրքոտ սրտի մէջ
Վառել է սիրոյ մի կրակ անշէջ…
Եւ գեղեցկուհին…

Կարօն ընդհատեց իր բանաստեղծութիւնը որովհետև տեսաւ ներս եկող հօրը, դէմքը խոժոռած, որը կարծես թէ աչքերով ուզում էր ասել, թէ բոլորը գիտէ,

Հայրիկը առանց երկար մտածելու, վերցրեց փայտը և ծեծելով Կարօին հայհոյեց։

Մեր բանաստեղծը չը համբերեց…

Ու՛ մեռնել, թողնել այս անիծեալ աշխարհը և գնալ հեռու, հեռո՜ւ, ուր թագաւորում է սէրը… Այսպէս մտածելով, աչքերը լցրած արցունքներով, վերցրեց գըլխարկը և դուրս փախաւ սենեակից։

Կարօի հայրը մի երկու բոպէ ապշած կանգնած էր… և յետոյ վճռեց քնել։

Կարօն վազելով գնաց դեղատուն։

Դեղատունը փակ էր, բայց Կարօն այնքան էր ուզում մեռնել, որ պարտք համարեց արթնացնել դեղատան գիշերապահ ծառայողին և զանգահարեց… չանցաւ երկու բոպէ դուռը բացւեց։

Կարօն դողդողալով ասեց՝

—Տը-ա-ը-տըւէք ինձ մի-մի-մի շահու նաշա-շա-շադիր…

—Դուք ինչո՞ւ համար էք ուզում այս կէս գիշերին նաշադիր։

—Էլ-էլ-էլեկտրական զանգակների։

—Կէս գիշերի՞ն։

—Խնդրեմ ունէք, դա ձեր բանը չէ, ասեց Կարօն մի փոքր բարկանալով։

Դեղավաճառը մտածեց և վերջը մի բան փաթաթեց թղթի մէջ, գրեց նրա վրայ անունը և տւեց Կարօին։

Կարօն անբացատրելի ձեով գցեց սեղանի վրայ հինգ կոպէկանոցը և շտապ դուրս գնաց։

Գալով տուն՝ նա արագ-արագ հանեց շորերը, բերեց մի բաժակ ջուր, ածեց գնած դեղը բաժակի մէջ և իր սկսած պօէմի տակը ստորագրեց. «Ես՝ հեղինակս զգացի, որ ապրել աշխարհում յիմարութիւն է, որ ոչ ոք չը գիտէ թէ ինքը ինչո՞ւ է ապրում և այդ պատճառով վճռեցի մեռնել» Ցետոյ գրեց մի առաջին կտակ, արա լաց եղաւ և հետեւեալ բառերը արտասանեց.

Մնաք բարև, իմ ընկերներ,
Մնաք բարև հայ օրիորդներ.
Լացէք, լացէք, արցունք թափէք,
Վերջին ողջոյնս դուք առէք։

## ՆՈՒԹԱՃԽԱՐՀԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

*Սիրելի Նիկոլ Իվանիչ*

Անցեալ երեկոյ շատ սպասեցի ձեզ, բայց չեկաք. Маня Ивановна-ն ինձ մօտ էր, սպասեցինք ուշ, բայց տեսայ որ չեկաք, хотя я телефонировалъ, ну, դժբախտաբար տանը չէիք, յետոյ իմացայ որ զասեդանիա ունիք։

Да, кстати, չմոռանամ։ Слушай! դուք վաղուց է որ գործարանը փակել էք, գործիքները ուղարկում էք ուրիշ տեղեր. այսուհետ ուղարկեցէք մեզ մօտ, մենք կը շինենք, ինչպէս ռեմօնտ, այնպէս էլ նորերը։

Знайте, мнѣ думалось на 50% сократить ծառայողներին... Համա ինչ сократить արի հա... աւելի շատ ինչպէս իրանք տալիս են, մաղից անցկացրի, ինչ և իցէ, պատուեցի։ Այժմ предлагаю свои услуги և խնդրում եմ փոխանակ ձեր գործիքները ուղարկելու զանազան մանր-մունր արհեստանոցների, прямо ուղարկեցէք къ намъ։ Գուցէ դուք առարկէք, թէ ամօթ է մեզ նման նաւթարդիւնաբերող և առևտրական տան՝ այդ տեսակ գործերով զբաղուելը, նամանաւանդ մեզ՝ ինչպէս կոոպերատիվների, կամ թէ դուք պարտաւորէք գործերը տալու ձեզանից հեռացրած բանուորներին, դրան ես համարձակ կասեմ՝ глупости.

Պարտականութիւնը ինչ բան է. что за партаканутюнъ, я не понимаю...

Բա էն ժամանակը ինչու պարտականութիւն ասած բանը իրանք չգիտէին, բա մեզ ամօթ չէր, որ գալիս բողոքում էին մեր կարգադրութիւնների դէմ...

Ձեզ եմ հարցնում, это не глупусть? մեր կողմից։

Կրկնում եմ, если դուք ձեր գործերը ուղարկէք մեզ, դրանով մենք մի գնդակով երկու որս որսած կը լինինք։

Во первыхъ.—Դուրսը բանուորը քաղցած կմնայ, ներսը եղածը խելօք կը մնայ։ (Это вы не должны забыть)...

Во вторыхъ մերոնք отъ испуга, թէ մեր նաւթահորերի գործերը կանեն և թէ ձերը, я говорю կանեն, որովհետեւ ես այնպիսիներին եմ պահել, որ ոչ թէ իրանց ուղղակի գործերը կանեն, այլ что прикажутъ, представте! առաջ երբ անցնում էի մօտերով, իսկի [illegible] չէին զգում թէ կառավարիչը անցաւ, хотя-бы смѣста шевелились...

Իսկ հիմա...

Вѣрите, եթէ օրը ցեխ չլինի, երեսների վրայ կը փռուին։

Ну, такъ սիրելիս, я тороплюсь, լիայոյս եմ, որ այս իմ առաջարկութիւնս ուրախութեամբ կընդունէք, աչքի առաջ ունենալով, որ իրանք առաջի տեղերով մնալ գիտէին, մենք չենք կարող մնալ...

Да чего имъ боятся.

Ну սիրելիս, ցը գրութիւն՝

Да слушай, чуть-чуть не забылъ. Երեկոյեան կլուբում կը լինեմ, Маня Ивановна-ն տանը, որ ժամը 10-ին մեզ կըսպասէ, Одинка-ին էլ հետն է բերելու, տես բաց չթողնես, պաա...

Հայորդեան

Արտագրեց «Բանւորի» № 22

---

*Բալախանու գործարաններում*

— Ակոբ, այս օրւայ կանտօրի յայտարարութիւնը կարդացի՞ր, որ դէկաբրեկից դադարը ընչացւում է և յետոյ նոր պաշտօններին կտարիր, կամ կտարուիրնի չեն տալու։

Մինչև հիմայ ձև էր դեկավարում դադարուրով, կամ օրէնքով. ինչպէս քէֆները ուզում էր, այնպէս էլ անում էին, իսկ որ նոր պաշտօնեաներին, կամ խալաստոյներին նոյն արտօնութիւնները չեն տալիս, ինչ որ առաջ էին տալիս, դրանում իրանք են տուժելու։

— Ինչպէս թէ իրանք, չեմ հասկանում...

— Զրհասկանալու ոչինչ չկայ, հարցը շատ պարզ է, չենք ամուսնանում, կամ ներկայ աշխատանքով չենք կարողանալու ամուսնանալ՝ ասում եմ, իրանք են տուժողը, քանի որ ապագայում բանւորութիւն չեն ունենայ, կը լինեն կաղեաններին նման ջեներալներ, առանց զօրքի... մեզ ինչ էն վախոր, ջահելը դուրս գայ, թող իրանք բան անեն։

Մոն-ւի



---

Նա աւելի շատ էր ուզում ասել, բայց մի գնդակի նման բան գալիս կանգնում էր կոկորդի մօտ, խանգարում էր խօսել և այդ ժամանակ շրթունքները կուչ էին գալիս, աչքերից թափւում էր մի ամբողջ հեղեղ և ահա այս դրութեան մէջ Կարօն անցկացրեց մի ամբողջ ժամ։

Վերջապէս վերցրեց բաժակը և մօտեցրեց շրթունքներին... և մի անգամին հոգով քաշելով՝ դատարկեց բաժակը։

Բոլորը վերջացած է...

Պառկեց անկողնում, աչքերը ձգեց, ձեռները խաչեց և սպասում է մահին... աչքերը չռած դէպի առաստաղը սպասում է հոգեհանին... ահա, ուր որ է, կը գայ...Մահճակալի ճռճռոցը սարսուռ է ձգում Կարօի սրտում... խեղճը դեղնում է... Նա երևակայում է, թէ ինչպէս հոգեհանը գալիս է փայլեցնելով իր մանգաղը... և Կարօն կցկտուր ձայնով աղաչում, խնդրում է հեռանալ, ուզում է ապրել... Նա բացատրում է, որ դեռ երիտասարդ է, ուղարկում է Աղասու Մարոյի մօտ և ենթադրում է որ հոգեհանը հեռանում է, բայց նորից մի ճլթոց և նոյն պատմութիւնը նորոգւում է։

Խեղճը ամբողջ գիշերն այսպէս չարչարւեց, սպասում էր մահին, բայց մահը չը կար։ Անցաւ գիշերը, հոգեհանը դեռ չէր եկել։ Ահա լուսացաւ, նա դեռ կենդանի է։ Վերկացաւ անկողնից և հայրը, Կարօն դեռ պառկած է։

Հայրը տեսնելով Կարօին պառկած՝ ստիպում է վեր կենալ և գնալ դպրոց։

Կարօն տեսնելով որ չի մեռել, այլ կենդանի է, չափազանց ուրախանում է, որովհետև այժմս բոլորովին միտք չունի մեռնելու։ Նա շատ զարմացաւ, թէ այդ ինչպէս եղաւ, որ նաշադիրը չը ներգործեց։ Հետաքրքրուելով վերցրեց այն թուղթը, որի մէջ փաթաթուած էր դեղը և կարդաց... և տեսէք որքան ծիծաղ. երբ նաշադիրի տեղ սօդա էր գրած։

Կարօն չափազանց ուրախացաւ, որ իր խմածը սօդա էր և նա մեծ ուրախութեամբ կերթար այն դեղավաճառի ձեռները կը համբուրէր, այդ խարէութեան համար, բայց ամօթը նրան զսպեց։

Կարօն պատառոտեց իր սկսած պօէմը Մարօի և Վարդայի նամակները և արագ հագնելով գնաց դպրոց։ Սրանից յետոյ, ամեն անգամ օրիորդներ տեսնելիս՝ 10 վերստ հեռու էր փախչում։

Կարօի գրած կտակը ինձ մօտ է, որը նուիրում եմ հայ աշակերտներին և աշակերտուհիներին, իբրև ընծայ առաջիկայ տօներին։

### ԿԱՐՕԻ ԿՏԱԿԸ

Մահիցս առաջ, ես գրում եմ
Վերջին խօսքս դառնագին,
Իմ սիրելիք, իմ ընկերներ
Չը տաք սրտերդ սէրին։

Օրիորդներ, աշակերտներ
Սիրել բառը մոռացէք,
Դրա տեղակ ամեն անգամ
Ձեր դասերը սերտեցէք։

Ով որ սիրէ, լաւ իմացէք
Իմ վիճակիս մէջ կընկնի,
Կորչ. ամօթ ու նախատինք
Եւ ծուլութիւն կը ծնէ։

Ոչ մի անգամ, դուք հայ տղերք
Աղջիկներին չը սիրէք,
Դուք փափկասուն օրիորդներ
Պարոններին չը յարգէք։

Շատ լաւ գիտէք այն ֆրազը,
Որ կը տանաք այդ դէպքում.
Շատ լաւ գիտէք, թէ ձեր սէրը
Ինչ պէտք է տայ ֆինալում։

Ես մեռնում եմ, իմ սիրելիք,
Բայց թողնում եմ կտակս,
Որ միշտ կարդան սիրուհիները
Եւ միշտ յարգեն շիրիմս։

Այսպէս տղերք և աղջկերք,
Սիրուց հեռու դուք փախէք,
Իսկ եթէ որ շատ դարդ ունէք
«Խաթաբալա» կարդացէք։

Վ Ե Ր Ջ

Լրտես № 30-ից

ეროვნული ბიბლიოთეკა


# ՆԱՄԱԿՆԵՐ ՎԵՐԻՆ-ԵՐՈՒՍԱՂԷՄԻՑ

«Խաթաբալա» «Դարդուբալա» ու «Զանդումար» թերթերի խմբագրապետ մեծարգոյ Գասպար աղա Կալաստուզեանցին։

> Եղբօրն ողջոյն և սիրալիր համբոյր.
> Իր յաւիտենական քաղաքների և տիեզերքի լիազօր գործակալ՝
> **Սադայէլից**

Ազնուազարմ տէր, -դուք հաւանական է վախեցաք, որ այս երկու ամիս է նամակ չեմ գրում Ձեզ։ Նամանաւանդ եթէ ի նկատի առնէք թերթերի բաժանորդագրական բլանկներն ու անդորրագրերը, կարելի է նոյն իսկ կասկածած լինէք իմ առ Ձեզ տածած համակրանքի համար և պակասեցրած Ձեր, իմ մասին ունեցած հաւատը։

Չգրելուս պատճառը բոլորովին այլ բան էր։

Այս տեղ էլ յեղափոխութեան փոթորկից, բաւական թւով սոցիալիստներ, որոնք վերջին տարիներս ինքնակամ կամ ուրիշի հաճութեամբ ուղարկւել են այստեղ, անգոհ մնալով մեզանում տիրող կարգերից, գըլխաւորապէս հայր Աբրահամի գոգում իրենց համար քիչ տեղ լինելու պատճառով, բողոք յարուցին։

Բեհեզգեբուղն ու Սանդարամետական վեհաժողովը ինձ նշանակեցին այդ ըմբոստներին ուղղիչ։

Փառք Իլլահին, պատիւ ուղղափառ «Խաթաբալային» և յարգանք մեծալուր կուսակցութեան։

Ըմբոստներին խելօքն բաւարարեցի, տիեզերական ընդհանուր գանձարանից և մատակարարական սնդուկից, գինի և հաց բաժանեցին։

Դեռ փոթորիկը չէր վերջացել, Կրուշեանի առաջնորդութեամբ Պարսկաստանի շէյխ Ձէյզուլլահը և Ադանայի ջարդարար բէգերը այնպիսի անկարգութիւններ սարքեցին, որ դժոխքը սարսեց, սանդարամետը դղրդաց։ Սրանք պահանջեցին արմատական միջոցներով դուրս վռնդել յաւիտենականութիւնից բոլոր հին և նոր բնակիչներին, հրէաներին, հայերին, օրինաւոր ռուսներին։

Կրուշեանը թեժ ու շիկացած երկաթներով այնպիսի անկարգութիւններ էր անում որ սատանաները անգամ վախում էին։

Շէյխ Ձէյզուլլահը փողի համար սատանաները կրճատեցնում էր, իսկ Ադանայի երեսունի չափ ջարդարար բէգերն ու Համիդի հրոսակները, հայ արիւնը Սէն-Րաֆայէլ գինու պէս էին ուզում խմել։

Դրանց քիթ ու պռունգն այնպէս ջարդեցին, որ իրենք հարիւր հազար տարի էլ խելքի չեն գալ։

Առհասարակ ռէակցիոն տարրերը այս տեղ յարգի չեն։

Շնորհիւ այն բանի, որ մեր պաշտելի «Խաթաբալան» այստեղ էլ լաւ է տարածւում, մարդիկ աւելի հեշտութեամբ են կարողանում կարգաւորել, ուստի և մտադրութիւն կայ սահմանադրութիւն մտցնել։

Եթէ տիեզերքում էլ սահմանադրութիւնը մտցւի, որ շատ հաւանական է, առաջին պայմանը կլինի մոլորակների կարգաւորման և գիսաւորների դատաւորութեան հարցը։

Մարսը բաւական դդւեցրել է ամենքին։ Հալլէյ աստղին կը հրամայւի իր տեղը ճանաչել։ Սանդարամետի կուլուարներում այս բաներս այդ առթիւ աւելի շատ են խօսում։

Ի դէպ այստեղ սահմանադրութիւն մտցնելուց յետոյ հարց է առաջ գալիս, թէ հայ ազգը ո՞ւմ աւելի կուզէ իր ներկայացուցիչը ունենալ տիեզերական խորհրդարանում։

Որչափ ինձ յայտնի է ձեր բոլոր գործիչները այնչափ էլ ազգասիրական ոգով չեն տոգորւած, որպէսզի կարողանան հայ ազգի տեղական գաղութի շահերը պաշտպանել։ Այստեղ Սպանդարեան և Համբ. Առաքելեանին աւելի ձեռնտու են համարում այդ պաշտօնի համար։

Խնդրում եմ այդ մասին իրենց կարծիքը հարցնէք և առաջին իսկ պոստով հաղորդէք մեզ, որովհետև բարեյաջող պայմաններում դրանց կը հրաւիրենք։

Բաժանորդագրութեան գործը լաւ է գընում. օրեկան 500,000 հոգի և աւելի գըրւում են։

Վիլհէլմ առաջին կայսրը, Նասրէդին Շահն ու Վիկտորիա կայսրուհին անցեալ օրը յատուկ բարևներ ուղարկեցին ձեզ և խնդրեցին իրանց էլ թերթ ուղարկել, իսկ փողերը պահանջել սառուցեալ ովկեանի գանձարանից։

Եղանակները այստեղ փոփոխական են. մթերքների թանգութիւն է տիրում։

Կաղամբը ուղղակի չի ճարւում իսկ սոխ ու սխտոր, նամանաւանդ կարտօֆիլ, փութը վաթսուն մանէթի է ծախւում։

Եթէ այդտեղից եկողները ուզենան գալ և այդ մթերքից բերեն այստեղ, շատ կըշահւեն։

> Միշտ պատրաստակամ Ձերդ Բարձրը ու գագաթնակէտ Մեծափառյածածանութեան խոնարհ՝
> **Սադայէլ**

Վերին-Երուսաղէմ
26 դեկտ.
Վեցերորդ միլիարդ դարում
(քամու փոստով)

---

*Ուսուցիչը*.—Ինչով ես զբաղւած ընկեր, որ բոլորովին չես երևում այժմ։

*Բ. ուսուցիչ*.—Օ՜, էլ մի ասիլ, ես վերջին ժամանակներս սարսափելի զբաղւած եմ։

*Ա. ուսուցիչ*.—Ինչով։

*Բ. ուսուցիչ*.—Ես այժմ ուղղում եմ Պիւթագորասի բազմապատկման աղիւսակը,

—Պետրոսեան, ինչու մի ամբողջ շաբաթ է պարապմունքի չէք գալիս։

—Կինս մեռել էր, Կարապետ Եակուլիչ, ներեցէք։

—Լաւ, այս անգամ ներում եմ քեզ, բայց նայիր, որ միւս անգամ այդպիսի բան չը պատահի։

—

—Ոչ մի խօսք անգամ չեմ կարողանում հասկանալ այս սիրողների առածներից, կարծես թէ հայերէն չեն խօսում, այլ մըլթօներէն.

—Դու էլ ականջ դիր յուշարարին, փառք Աստուծոյ, նա այնքան բարձր է կարդում, որ թատրոնից մի երկու տուն հեռու էլ կարելի է լսել։

---

# ՊՈՍՏ-ԱՐԿՂ

Բագու Բաղ-Դանունուն.

* *
*

«Կաթնատանից մածնարան,
Մածնարանից ճաշարան,
Ամենայն տեղ անդադար
Ման է գալիս խելագար։
Մաքուր լուսնեակ գիշերին,
Խիտ ծառերի ստւերին,
Ողջունում է անդադար.
Իբր խելօք մի անհատ։
Ցերեկները իբր հերոս,
Գիշերները իբր փարոս,
Հանդիպողին բարև...
Բայց և ասում է քարոզ։
Նրա համար միտք չունի,
Ով որտեղ ինչ բան ունի,
Պարտաւոր է անպատճառ
Ունկընդրելու նրա ճառ։
Մին էլ տեսար պարտիզում,
Աչք ճպեցիր կօնկայում,
Մինչ դու կուզես հագալու
Նա կլինի բուլւարում։
Ամենայն տեղ ազատ է,
Նա խօղ ունի ամեն տեղ,
Այս հերոսը չէ մանուկ
Ունի նա և մօրուք բեխ»։

—

Ձեր այս ոտանաւորը լաւ է, շատ լաւ, եթէ սրա նման ոտանաւորներ մի դիւժին, կամ մի քիչ էլ աւել ունիք, առանձին գրքով եթէ տպէք—անպատճառ բանաստեղծ և իդէալիստ ու մօդերն բանաստեղծ կը կոչւիք, ինչպէս բանաստեղծներից 95 տոկոսը մեզանում, իսկ եթէ ուզում էք տպագրենք, պայմանը այս է, տողին մէկ կոպէկ գոնէ կը խնդրենք, որ հոնորար տաք. պարզ հաշիւ։

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՈՒՄ
«Խաթաբալայի» և «Սուրհանդակի» գործակալ է պ. Տիգրան Նազարէթեան, որի մօտ կարելի է բաժանորդագրուել յիշեալ թերթերին միասին, կամ ջոկ ջոկ:
Հասցէն՝ «Մելքի կրկղիտ»

№ 4711 КРАСКА для ВОЛОСЪ
изъ орѣховаго экстракта
ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐԿ

Ընկուզի քաղուածքից. Կարճ ժամանակում տալիս է մազերին ուզած գոյնը՝ ամենաբաց շէկագոյնից մինչև սեւ. Թէկուզ մազերը ալեխառն կամ խայտաբղէտ լինեն, այնպէս որ կարելի է նորոգել նրանց բնական գոյնը: Ինչքան յաճախ գործածուի այս ներկը, այնքան կը մուգանան մազերը, № 4711 մազերի համար ներկը, ընկուզի հիւթից՝ արժէ որ գերադասուի մազերին գոյն տւող բոլոր միջոցներից, որովհետև նա չէ պարունակում իր մէջ ոչ մի վնասակար նիւթ:

ԳՈՅՆԵՐՆ ԵՆ
սև, դարչնագոյն, շագանակագոյն և բաց:
Գինը փոքր սրուակի 1 ր. 20 կ.
» մեծ » 2 ր. — կ.
Ծախւում է բոլոր լաւագոյն խանութներում:
Քէօլն Ռայնի վրայ, բաժանմ. Րիգայում: Նորին Կայսերական Մեծութեան Դատն մատակարար:

Ферд. Мюльгенсъ
Кельнъ н/Рейнѣ отд. въ Ригѣ




Դատաւոր.—Ինչու համար էք դուք հրաժարւում ձեր պարտքը վճարելուց:
Պարտապան.—Պարոն դատաւոր, ես չեմ հրաժարւում և հենց դրա համար էլ ստորագրութիւն եմ տալիս: Երբ որ փող ունենամ, կը վճարեմ,
Դատաւոր.—Իսկ երբ կունենաք փող:
Պարտապան.—Այ, հենց բանն էլ դրանումն է, որ ես ինքս էլ չգիտեմ, թէ երբ կունենամ,

Մատակարար Ն. Կ. Մեծութեան

### Ընկ. Ա. ՐԱԼԷ և Cº

Հատածախի մագազին Գոլովինսկի պրօսպեկտ

# ԾՆՆԴԵԱՆ ԸՆԾԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ստացուած են մեծ քանակութեամբ

**ԿԱՇԻԷ ԿԵՐՏՈՒԱԾՆԵՐ**

ԱՅԼ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՓԱՅՏԻՑ ԶԱՐԴԻՐԵՐ
Դաջուած և սխմած մետալից ձեռքի առարկաներ
2—1

Յօգուտ Թիֆլիսի Հայ Գիւղատն. և Տնայնագործական Ընկերութեան
Շաբաթ, 26 դեկտեմբերի
ԱՐՏԻՍՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԵԾ ԴԱՀԼԻՃՈՒՄ
կրկայանալ

# ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

ՀԵՏԵՒԵԱԼ ԾՐԱԳՐՈՎ

I Երկու սեռի մանուկների համերգ:
II Թատրոն-սինեմատօգրաֆ՝ մանկական բեմերատարով:
III Պլաստիքական մարմնամարզութիւն՝ յատուկ հագուստներով:
IV Մանկական խաղեր՝ երգերով:

Վիճակախաղ՝ հասակաւորների համար, երաժշտութիւն, ծաղիկներ, մանկական շքեղ գնացք, բուֆետ, ծաղիկներ և զինուորական երաժշտութիւն:
Տոմսակները թէ հասակաւորների և թէ երեխաների համար 1ր 10կ.:
Սկիզբն է երեկոյեան ժամը 6-

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1910 Թ.

# ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

(ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)
Գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական ԼՐԱԳԻՐ
ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՌԺԱՄԱՆԱԿ
ooo ՇԱԲԱԹԸ ԵՐԵՔ ԱՆԳԱՄ ooo
Չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը
«ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ» բաժանորդները կարող են ստանալ «ԽԱԹԱԲԱԼԱ» երգիծաբանական շաբաթաթերթը պակաս վճարով:
ԲԱԺԱՆԵՎՃԱՐՆ Է
Տարեկան 7 ր., կէս տարուան 4 ր., երեք ամսուան 2 ր. 25 կ., ամիսը 75 կ.:

**ՍՈՒՐՀԱՆԴԱԿ և ԽԱԹԱԲԱԼԱ**
(Միասին)

| | | | |
|---|---|---|---|
| Տարեկան . . | 10 | — Երեք ամիսը | . 3—50 |
| Կէս տարին. . | 6 | — Մէկ ամիսը. | . 1—20 |

Տղամարդկանց դերձակ

## Ն. Ս. ԼԱԶԱՐԵԱՆՑ

(Երևանեան հրապարակ, տուն Խարազեանի № 3 հայեաթում)
Ընդունում է տղամարդկանց հագուստի պատուէրներ:
Նոր ստացել է մեծ քանակութեամբ՝ արտասահմանի և Ռուսաստանի ֆիրմաներից սեզոնի կտորներ:
Պատուէրները կատարւում են ճշտութեամբ և բարեխիղճ:
Գները մրցումից դուրս: 4—4

## ՄԵՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ



—Հը Միշա, ինչպէս է գործերդ։
—Ոչինչ լաւ է. ամսական 17—18 րուբլու գործ ունիմ. իսկ դու։
—Մի սատկած էլ չի պատահում, որ կարողանամ գրօշանոց գործից հարիւրներ առնել, ես իսկի կոպէկ չեմ վաստակում։
—Ուրեմն ինձ նման։
—Այո քաղցած եմ։

## ՆՐԱՆՔ



—Հ՛ը, ինչպէս է գործերդ։
—Ոչինչ, լաւ. ես այլևս նրանց հետ չեմ, դուրս եկայ այդ կուսակցութիւնից։
—Ի՞նչու։
—Էլ փող չկայ, քաղցած հօ չէի մնալու։

## ՏԱՐԻՆ ՎԵՐՋԱՑԱՒ



Տարին վերջացաւ և ես խիստ գոհ եմ,
Գրաւականցիայով գործեր տարել եմ,
Հային խափելով խելքից հանել եմ,
Տուն շինել եմ, նրան քանդել եմ,
Գործչի անուն արդէն վաստակել եմ։

## Խաբարաղխատներ բոլոր Թիֆլիսի

ԵՐԲ ՈՐ ՇՐՋՈՒՄ ԼԻՔ Գոլովինսկի պրոսպէկտի վրայ, մի՛ք մոռանայ Արքունի Թատրոնի դիմաց, Անանեանի տանը գտնւող

# Օ-ԲՕՆ-ՄԱՐՇԷ

վ ա ճ ա ռ ա տ ո ւ ն ը, որ առաջիկայ տօների համար ստացել է մեծ քանակութեամբ կանանց ու տղամարդկանց արդուզարդի պարագաներ, գըլխարկներ, շարֆեր, վզնոցներ, փողպատներ և այլն և այլն։

Ծախւում է անասելի էժան գնով։ 3—3

— Պարոն, մեր կացէք, ի սէր Աստուծոյ, տունը այրւում է։

— Վնաս չունի տունն էլ, կահկարասին էլ ապահովագրւած են։

— Շուտ արէք, վերկացէք, թէ չէ դուք էլ կայրւէք։

— Վնաս չունի, կեանքս էլ է ապահովագրւած։

—

— Ուրեմն այդպէս, բարեկամս, դու ամուսնացել ես և այժմ բաղդաւոր ու երջանիկ ես։

— Աւելի լաւ է ասա՝ — ես բաղդաւոր ու երջանիկ էի, իսկ այժմ ամուսնացել եմ։

Ալ. Ինչու էք շարունակ իմ յետևից թրև գալիս, կարծես թէ ծառաս լինիք։

Սա.— Ուրեմն դուք ծառաներին էլ էք աչքով անում։

—

— Ես լսել եմ, որ դուք մտադիր էք ամուսնանալ. շատ հետաքրքիր է իմանալ, թէ ով է ձեր ընտրած օրիորդը։

— Դեռևս ես ինքս էլ չգիտեմ, թէ ով կլինի իմ նշանածս, սակայն իբրև ազնիւ մարդ, ես պարտաւոր եմ ամուսնանալ։

— Ինչու։

— Որովհետև հնարաւորութիւն ունենամ պարտքերս վճարելու։

—

— Մայրիկ, հայրիկի մեծ բառարանում ամեն ինչ կարելի՞ է գտնել,

— Այո, սիրելիս։

— Ապա մի փնտրիր խնդրեմ, ես իմ տիկինս կորցրել եմ, գուցէ այնտեղ լինի։

Կովկասում քանակութեամբ և գիրքով ԱՌԱՋԻՆԸ արագատիպ մեքենաներ

## Խրոմո-Լիտոգրաֆիա

# Ս. Ի. ԲԻԽՈՎԻ (երբեմնի Նակշաս)

Գոլովինսկի պրոսպեկտ տուն Օրոյեանի, տելեֆոն № 433

Յայտնում է ի գիտութիւն պ. պ. պատւէր տուողների, որ այս տարւայ նոյեմբերի 1-ից, վիմագրատունը ամբողջովին իմ սեպհականութիւնը դառնալով, նշանաւոր չափով ընդարձակել և աւելացրել նոր կանտորակցիայի և ամենամեծ գիրքի արագատիպ մեքենայով՝ իւր բոլոր օժանդակիչ պարագաներով։ Այս հանգամանքն ինձ հնարաւորութիւն է տալիս պատւէրները կատարել շուտ, ճշտութեամբ և աւելի էժան միւս վիմագրատուններից։ Ցանկանալով վիմագրական գործը Կովկասում հասցնել իր արժանի բարձրութեան, ես չեմ խնայելու ոչ մի ծախս, որովհետև բաւարարեմ ժամանակակից տեխնիկային։ Յոյս ունիմ, որ պ. պ. պատւէր տուողները, առանց ուշադրութեան չեն թողնիլ վերյիշածներս և կպատւեն ինձ իրանց յարգելի պատւէրներով, իսկ ես իմ կողմից ամեն ջանք գործ կդնեմ բաւարարելու պահանջները։

Յարգանքներով Ս. Ի. ԲԻԽՈՎ.

5—3

## Նորութիւն Կովկասի համար

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՆՈՐ ՏԵՍԱԿԻ ՆԵՐԿ

# „КУФАЛЬ“

Միմիայն 20 կոպէկի տալիս ենք 1 փաթէթ ներկ և 1 փաթէթ պրոտրաւ ցանկացած գոյնի, որով ամեն մարդ կարող է առանց մի դժւարութեան ներկել ամեն տեսակի (2 ֆունտ քաշ ունեցող) կտորեղէններ, ինչպէս են կանանց և տղամարդկանց զգեստներ, գուլպաներ, լենտեր, կրուժովներ և այլն և այլն։

„Куфаль“ ներկով ներկած կտորեղէնները՝ ոչ մի դէպքում չեն խունանայ։

„Куфаль“-ը իր էժանութեամբ մատչելի է հասարակութեան բոլոր խաւերին։

Գոյների շարքում ունինք նաև „Защитный» գոյնը, որը առանձնապէս պիտանի է զինւորականներին։

Ամեն 1 փաթէթի հետ տալիս ենք «Куфаль-ի գործածելու միջոցը», գրւած ռուսերէն, հայերէն, վրացերէն և թուրքերէն լեզուներով։

Գումարով գնողներին զգալի զեղչ։

Օտար քաղաքների պատւէրները կատարւում են ամենայն ճշտութեամբ, ստանալով նախավճար։

Մեր հասցէն гор. Тифлисъ, Красногорская ул. д. № 11

М. М. Купалянцъ.

10—3 Կառավարիչ՝ Կ. ՔՈՒՓԱԼԵԱՆՑ

МАГАЗИНЪ

# Композиція

Тифлисъ, Пушкинскій пассажъ № 8



Громадная экономія шведскаго композиціон. бѣля.

Носится не менѣе двухъ лѣтъ

Постоянный большой выборъ свѣжаго товара

Воротниковъ, манишекъ и манжетъ.

Единственный представитель для Тифлиса и ихъ окрестностей

по фабричнымъ цѣнамъ

передѣлка въ любой фасонъ безплатно

М. А. КАЛТАГЯНЦА 30—24

Մանուֆակտուրային վաճառք

МАНУФАКТУРН. магазинъ

## ՅՈՎ. ԳՐ. ԿԱՃԿԱՃԵԱՆԻ

И. Г. КАЧКАЧЕВА
Сололакск. ул. № 4

Հոկտեմբերի 20-ից, Սօլօլակսկայա փողոցի վրայ, «Պրօվօդնիկ ընկ.» խանութի շարքում, Ազօվ-Դօնեան բանկի ներքեւում, (Ամիրաջեանի նախկին խանութի տեղը) բացւած է մանուֆակտուրայի ապրանքների ՎԱՃԱՌՔ. Ստացւած են մեծ քանակութեամբ սէզօնի նորութիւններ, այն է՝ մետաքսէ, բրդէ, մահուդէ, բամբակէ և բոլոր դպրոցական հիմնարկութիւնների պաշտօնազգեստների կտորներ, աշակերտական ամենալաւ տեսակի մահուդ և զանազան պլէդներ՝

ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

Բրդէ շալեր, պլիւշի, բայկի, պիկէ, ատլասի և Քաշմիրի վերմակներ։

ԲԱԹԱՆԻ ԱԳՐԱՆՔ ԵՒ ՍԵՂԱՆԱՏԱՆ ՍՊԻՏԱԿԵՂԷՆ

ամենալաւ ֆաբրիկաների, գորգերի տեսակ, պլիւշի սփռոցներ, թաւիշ, պլիւշ և մանչեստր։ Բազմաթիւ գոյներ։ Սատին, բատիստ, բումազէյ, նանսուկ և չիթ։ Բամբակէ գործւածքներ՝ սպիտակ և գունաւոր՝ սպիտակեղէնի համար և յայտնի ֆաբրիկաների սաւաններ։ Բայկա և ֆլանէլ՝ գունաւոր և սպիտակ։ Արշինով վաճառքը մեծաքանակ վաճառքի գնով։

ՎԱՃԱՌՔԸ ՄՐՑՈՒԹԻՒՆԻՑ ՎԵՐ

ԱՌԱՆՑ ՍԱԿԱՐԿՈՒԹԵԱՆ

—о— ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ —о— 20—9



Թիֆլիս քաղաքի կենտրոնում
Վելեամինովեան փող. սեփ. տուն № 5.

ՆՈՐ ԲԱՑՒԱԾ

## ԱԼԷՔՍԱՆԴՐՕՎՍԿԻ ՆՈՄԵՐՆԵՐ

Սենեակները շքեղ կահաւորւած, վաննա և դուշ. ամենամեծ յարմարութիւն ընտանիքով եկողների համար։

Կին և տղամարդ ծառաները ԲԱՂԱՔԱՎԱՐԻ.

Նոմերները 1 րուբլուց սկսած և աւելի

Ամառվանով կեցողներին առանձին մեծ զեղչ:

ԶՐԻ ՎԱՌԵԼԻՔ

Գոլովինսկի փողոցից 2-դ տունը, բաղզոնի փօշտի դիմաց, որի ներքին յարկում տեղաւորւած է Վլադիկաւկազի, Թելաւի և Սղնախի տրակտի գրասենեակը։
Տան սեփականատէր Ալէքսանդր Մ. Յարութինով։ 5—5


Հիւրը.—Այս ինչ է. այս կերակուրը բոլորովին սառն է։

Ճաշարանի տէրը.—Չի կարող լինել, որովհետև երեք օր է, որ տաքացնում ենք նրան։

—

— Մենք, Աննա, մի տարի չկայ ինչ ամուսնացած ենք և դու արդէն դաւաճանում ես ինձ։ Էլ ինչու համար էիր մինչև մեր հարսանիքը միշտ կրկնում ինձ, թէ մինչև կեանքիդ վերջը պիտի սիրես միայն և միայն ինձ։

— Բայց ես այն ժամանակ ճրտեղից կարող էի իմանալ, թէ ինչ կարող է պատահել մարդու հետ կեանքում։ Ես այն ժամանակ չափազանց անփորձ էի և շատ քիչ էի ճանաչում կեանքը։

— Համեցէք, ստացէք ձեր գիրքը, շատ հետաքրքիր վէպ է և իմ խորին շնորհակալութիւնս եմ յայտնում նրա համար։

— Բայց դուք նոյն իսկ գրքի երեսներն էլ չէք կտրել, ինչպէ՞ս էք կարդացել։

— Ա՜խ, գիտէք, նա այնքան հետաքրքրաքիր է գրւած ու ես այնքան էի տարւել կարդալուս ժամանակ, որ նոյն իսկ մոռացել եմ երեսները կտրատել։

—

Գրողը.—Դուք չէք ուզում տպագրել իմ պատմւածքս ձեր ամսագրում, տւացէք ինձ գոնէ, ճրտեղ կընդունեն նրան։

— Խմբագիրը. Պատասխանը, եթէ միայն հարկաւոր քանակութեամբ մարկաներ կպցնէք։


Ս. և Ա. ՂՈՒ-  ԿԱՍԵԱՆՆԵՐԻ

## ՁԿՆԱՎԱՃԱՌԻ ՄԱԳԱԶԻՆԸ

(Պուշկինեան փող. տուն Սոնդուկեանի, վրաց սեմինարիայի դիմաց)
Ամեն օր ստացւում է սեփական ձկնարդիւնաբերանից թարմ ձուկ
ՍԵՒՐՈՒԳԱ, ՕՍԷՏՐԻՆ, ԹԱՐԹ
Ունենք մեծ քանակութեամբ թարթի դօշ, Դօնի և տեղական բալիկ, ճիպա, ցալձւալա, եանի և այլն։
ԸՍՏԻՐ ՏԵՍԱԿԻ ՁԿՆԿԻԹ (жидка) ԵՒ ԽԱՒԻԱՐ
Կովկասեան և արտասահմանեան ձկնային կոնսերւներ Գները ամենաչափաւոր։ 20—16


Խմբագիր-հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ.

Типографія Т-ва „Культура“, Вельяминовская, 18.

# ԲԵՌՆԱԿԻՐՆԵՐ



ეროვნული ბიბლიოთეკა

—Օգնեցէք, ծանր է այս տեղով այս ծանրութիւնը տանել։
—Մենք ինչ կարող ենք անել։
—Դուք չէ՞ որ մեր առաջնորդներն էիք, չէ՞ որ մեզ...
—Մե՞նք, մենք խեղճ էլ չէ. մենք ձեր վարձկաններն էինք, փող էիք տալիս և պաշտպանում էինք։
—Օգնեցէ՞ք, օգնեցէք.
—Մենք ոչինչ չենք կարող անել. մենք ձեզ չենք էլ ճանաչում։

### ՍԱՏԻՐԱ

Օրը դեռ չէ մթնել, հաւերը դեռ թառ չեն նստել—և դուք այդպէս շուտով մոռանում էք ձեր խօսքը, ամօթ, ամօթ ձեզ։
(Բայց ամօթի համար գաղափար ունե՞ն)։